Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/25 ծածկագրով Արարատ քաղաքի վարչական տարածքում ոռոգման ջրի հորատանցքի հորատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով կազմակերպված Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արարատ

04.08.2022թ.
Ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրջյան
Հանձնաժողովի անդամներ՝ Արթուր Իսաջանյան
Մեխակ Աբրահամյան
Արտակ Զաքարյան
Նունե Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան

1. Գնանշման հարցման ընթացակարգին մասնակցների կողմից ներկայացված հայտերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Թիվ 28 ՇՄՇ» ՍՊԸ–ն օրենքով սահմանված ժամկետում չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունը: Հաշվի առնելով, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, հանձնաժողովը որոշեց «Թիվ 28 ՇՄՇ» ՍՊԸ–ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի բանակցություն հրավիրելու մասին

2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված 526-Ն որոշման գնումների կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին՝ «Արխի Թուլս» ՍՊԸ-ին և «Դելտաշին» ՍՊԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների սկիզբը 08.08.2022թ. ժամը 10:00-ին, տևողությունը 1(մեկ) ժամ, հասցեն ք.Արարատ, Շահումյան 34: Բանակցություններին կարող են մասնակցել ընկերությունների տնօրենները՝ անձը հաստատող փաստաթղթով, վերջիններիս բացակայության դեպքում լիազոր ներկայացուցիչը՝ լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձ. նախագահ՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ _____ Ա. Իսաջանյան

_____ Մ.Աբրահամյան

_____ Ա.Զաքարյան

_____ Ն.Կարապետյան

Քարտուղար՝ _____ Կ. Մելքոնյան